600.0121.19.05.16

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

19 մայիսի 2016 թվականի №121Ա
ք.Երևան

## «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ԳՈՌՆԱՐ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ (ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, հաշվի առնելով «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2016 թվականի ապրիլի 15-ի հայտը և, ի լրումն հայտի՝ 2016 թվականի ապրիլի 21-ի և մայիսի 12-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանում (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Հերմոն և Գետափ համայնքների վարչական տարածքներում՝ Վայոց ձորի ինքնահոս ոռոգման համակարգի վրա (ոռոգման համակարգ)) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2033 թվականի հոկտեմբերի 9-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2018 թվականի հոկտեմբերի 9-ը:

2. Հաստատել «ԳՐԻՆ ԷՆԵՐՋԻ ԿՈՆՑԵՌՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Գոռնար» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի

(հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
19 մայիսի 2016թ.
ժամը $16^{00}$